

ԳՈՅԱՐ ԲԱԴՐԱՄՅԱՆ
 GOHAR BAGHRAMYAN

ԲԱՌԱՅԻՆ ԲԱՆԱԴԱՐՉՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂՈՒՄԸ
 Գ.ՊԱՐՈՆՅԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ, ՋՈՋԵՐ»
 ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լեզվաոճական արժեք ունեցող ոճական հնարների համատեղմանն աղբյուրադրժեք ենք մեր նախորդ ուսումնասիրություններում¹ և սույն գրական ստեղծագործության մեջ բառային բանադարձում և դարձույթ ոճական հնարների² համատեղ կիրառման առանձնահատկությունների արդեն իսկ կատարված քննությամբ պարզել, որ ոճական միևնույն համատեքստը կարող է բազադրվել վերոնշյալ ոճական հնարանքների համատեղման ամենատարբեր կառույցներով, որոնք էլ կարող են ներառել տարաբնույթ ենթակառույցներ: Այսպես «Դարձույթ+դարձույթ» ոճական կառույցն արտահայտվում է ինչպես նույնատիպ (միատարր)³, այնպես էլ տարրատիպ (ոչ միատարր)⁴ դարձույթների համատեղմամբ ձևավորված բազմաբաղադրիչ ոճական ենթակառույցներով:

«Դարձույթ+բանադարձում»⁵ և «բանադարձում+դարձույթ»⁶ տարրատիպ (տարրաբաղադրիչ) ոճական կառույցներն արտահայտվում են միայն ոչ միատարր ոճական հնարանքների և միջոցների համատեղմամբ բազադրված ենթակառույցներում ի հայտ բերելով նաև դիրքային առանձնահատկություններ: Սույն ուսումնասիրությամբ փորձել ենք քննել ոճական վերոնշյալ հնարների համատեղ գործածության ևս մեկ դրսևորում, որն արտահայտվում է

¹ Տես Հանրապետական ուսանողական 2-րդ գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2011, էջ 74-81, Կանթեղ, Գիտական հոդվածներ, Երևան, 2012, էջ 41-55, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2011, էջ 35-40:

² Լեզվաոճական այդ միջոցների և հնարանքների մասին տես Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզու. Ոճաբանություն, Ե., 1976, էջ 56-57, Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզու. Ոճաբանություն, Ե., 1998, էջ 38, Ա. Սարուբյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000, էջ 136-139, Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, էջ 360, Գ. Բ. Ջահուկյան, Լ. Եզեկյան, Հայոց լեզու. Ոճագիտության ուղեցույց, Ե., 2007, էջ 66, էջ 89, Թ. Ս. Եահվերդյան, Ոճագիտություն, 2010, էջ 13:

³ Տես Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, էջ 35-40:

⁴ Տես Կանթեղ, Գիտական հոդվածներ, էջ 41-55:

⁵ Տես Հանրապետական ուսանողական 2-րդ գիտաժողովի նյութեր, էջ 76-79:

⁶ Նույն տեղում, էջ 79-80:

ոճական միևնույն համատեքստում բառային բանադարձումների համատեղմամբ: Այս դեպքում ոճական համատեքստը կարելի է արտահայտել «բանադարձում+բանադարձում» ոճական միատարր կառույցով: Այսինքն ոճական մեկ համատեքստում կարող են համատեղ գործածվել ոչ միայն նույնատիպ ու տարրատիպ բառային դարձույթները, այլև բանադարձումները, վերջիններս, սակայն, ի տարբերություն դարձույթային կառույցների չեն ձևավորում տարրատիպ ոճական կառույցներ, այլ հանդես են գալիս նույնատիպ բանադարձումներով բաղադրված ոճական միատարր ենթակառույցներով: Այսպիսիով «բանադարձում+բանադարձում» կառույցն արտահայտվում է միատարր ոճական արտահայտչական միջոց-բաղադրիչների համատեղմամբ ձևավորված բազմաբաղադրիչ կառույցով:

«Ոճական բանադարձումները չեն փոխում բառի կամ նախադասության իմաստը, սակայն նրանց օգտագործումը լրացուցիչ արտահայտչականություն է հաղորդում խոսքին»⁷: Բանադարձումների համատեղ օգտագործումն էլ իր հերթին նպաստում է զրական ստեղծագործության գեղարվեստականացմանը և դիպուկ, պատկերավոր ու արտահայտիչ խոսք ձևավորելուն:

Ստորև քննում ենք «բանադարձում+բանադարձում» ոճական միատարր կառույցի ձևավորման և համատեղված բանադարձումների ի հայտ բերած ոճական առանձնահատկությունները Գալոբ Պարոնյանի «Ազգային ջոջեր» ստեղծագործության մեջ: «Ոճական այս կամ այն հնարի համատեղումը մեկ կամ մի քանի հնարի հետ ոչ թե զուտ դրանց զուգահեռ կիրառություն է, այլ փոխկապակցում ամբողջական ոճական կառուցվածք ստանալու համար: Գամատեղ հանդես եկող ոճական հնարները այս դեպքում պետք է փոխպայմանավորեն մեկը մյուսի ստեղծումն ու դրսևորումը... Գամատեղված պետք է համարել այն կիրառությունները, երբ մի քանի ոճական հնար մասնակցում է միևնույն երևույթի պատկերմանը, իսկ երբ յուրաքանչյուր ոճական հնար նպաստում է որևէ առանձին երևույթի պատկերմանը, այսինքն համադրված ոճական հնարները փոխկապակցված չեն և միևնույն ամբողջական երևույթի ոճականացման միտումն չունեն միասին վերցրած, ապա համատեղ գործածման մասին խոսելն ավելորդ է»:⁸ Ոճական հնարների համատեղ կիրառություն ասելով այս դեպքում հասկանում ենք մեկից ավելի նույնատիպ բանադարձումների համադրումը մեկ ամբողջական ոճական համատեքստում: Ինչպես նշեցինք նույնատիպ բանադարձումների համատեղմամբ ձևավորվում է

⁷ Տես Թ. Ս. Շահվերդյան, *Նշվ. աշխ.*, էջ 110, Ֆ. Գ. Խլղաթյան, *Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու*, Երևան, 1976, էջ 11:

⁸ Գանրապետական ուսանողական 2-րդ գիտաժողովի նյութեր, էջ 75: Ոճական հնարների համատեղման առանձնահատկությունների մասին մանրամասն նույն տեղում, էջ 75-76:

մեկ ամբողջական միատարր բանադարձումային ոճական կառույց, որն էլ իր հերթին կարող է բաղադրված լինել երկու և երեք բանադարձումից, ըստ որի էլ ոճական համատեքստն արտահայտվում է երկբաղադրիչ և եռաբաղադրիչ կաղապարներով: Բանադարձումների համատեղման առանձնահատկություններով պայմանավորված ստեղծվում են հետևյալ կառուցվածքային կաղապարները: 1. «Բանադարձում+բանադարձում» երկբաղադրիչ, միատարր կառույց, որը ձևավորող բանադարձման գործառույթով հանդես է գալիս աստիճանավորումը⁹ (աստիճանավորում+աստիճանավորում): «Երբեմն ոճական մեկ համատեքստում զուգահեռաբար կիրառվում են մի քանի աստիճանավորումներ ավելի ուժգնացնելով նկարագրվող տեսարանի ներգործությունն ընթերցողի վրա»¹⁰: Ընդ որում համատեղվում են բարձրացող աստիճանավորումներ¹¹:

Անտոն Գասունյանը խարդախությամբ տիրում է պատրիարքական աթոռին, որից հետո նրա գործունեության հետևանքները Պարոնյանը ներկայացնում է աստիճանավորմամբ, այսպես «... պատրիարքն յուր աթոռն վար գլորեցավ: Գասունյան բարձրացավ պատրիարքական աթոռին վրա. հով. անձրև, կարկուտ, փոթորիկ անմիջապես հասան, շատ մը տուներու ապակիներն փշրվեցան. մեծ ծառեր արմապախիլ եղան քանի մը տուներ կործանեցան»¹²:

Եվ այս ամենը Գասունյան պատրիարքի գործունեության արգասիքն է:

Նկատենք, որ այս ոճական հնարով պատկերվել են բնական երևույթների առանձին որակական կողմերի աստիճանական աճման դրսևորումները¹³: Ընդ որում՝ աստիճանավորումը տեղի է ունենում մի դեպքում նախադասության առանձին բազմակի անդամների կիրառմամբ, մյուս դեպքում՝ գործողությունների ինտենսիվության ուժգնացմամբ: Երկու դեպքում էլ աստիճանավորում կերտող «համասեռ անդամները հոմանիչ չեն միմյանց, այլ յուրաքանչյուր հաջորդը ավելի սաստկացնում, ուժեղացնում է նախորդի հիմնական բառաբանային իմաստը»¹⁴:

2. «Բանադարձում+բանադարձում+բանադարձում» եռաբաղադրիչ, միատարր կառույց, որի բաղադրիչ կարող է դառնալ դարձյալ աստիճանա-

⁹ Աստիճանավորման մասին տես Գ. Վահանյան, Գայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Ե., 1956, էջ 99-100, Ֆ. Գ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 11, Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Գ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 72, Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 120:

¹⁰ Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 122: Տես նաև Ֆ. Գ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 11-12, Լ. Եգեկյան, Գայոց լեզվի ոճագիտություն էջ 122:

¹¹ Տես Ֆ. Գ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 11:

¹² Տես Գեղարք Պարոնյան, Երկեր, Երևան, 1969, էջ 98, այսուհետ կնշվի միայն էջը:

¹³ Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 122: Տես նաև Ֆ. Գ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 11-12, Լ. Եգեկյան, Գայոց լեզվի ոճագիտություն էջ 122:

¹⁴ Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 121:

վորում (աստիճանավորում+ աստիճանավորում+աստիճանավորում): Այս միջոցով Պարոնյանը ծաղրում է մեռյալների վրա դամբանականներն ըստ ստացած ոսկիների քանակի կարդացող հոգևորական խորեն Գալֆայանին ընդգծելով կաշառակերության հատկանիշը, այսպես

«Մեկ ոսկի տվող մեռյալն բարեսիրտ կըլլար, երկու դրկոզը բարեսիրտ և քիչ մ'ալ ազգասեր կը հռչակվեր, երեք նվիրողը ազնիվ սրտով և վեսն զգացումներով կը զարդարվեր, չորս համրողը հանրածանոթ ազգասեր կը ծանուցվեր, հինգ տվողն կենդանությանը ժամանակ այնքան զաղտնի ողորմություն տված կըլլար աղքատներուն, որ մարդ տեսած չէր ըլլար: **հայրենյաց բարերար կը հորջորջվեր»** (էջ 29): Նկատենք, որ այս համատեքստում համատեղված ոճական հնարները փոխկապակցվում են եռաստիճան ածմամբ նպաստելով մեկ անբողջական ոճական հնարանքի բարձրացող աստիճանավորման ստեղծմանը: Այստեղ աստիճանավորումն իրականացվում է ինչպես ոսկիների քանականիչ միավորների, այնպես էլ դրանց համապատասխան տրվող որակումների ածմամբ: Միավորների աստիճանական ածմանը զուգընթաց աճում են նաև մեռյալին տրվող որակումները: Նկատենք մի հանգամանք ևս. ոսկիների քանակի աճումը նպաստում է նաև բայերի իմաստային ածմանը. որի արդյունքում ունենում ենք աստիճանավորման երրորդ եզրը «կըլլար, կը հռչակվեր, կը զարդարվեր, կը ծանուցվեր, կը հորջորջվեր»: Աստիճանավորումների հենց փոխկապակցված գործածությունն է ընկած բազմաբաղադրիչ բարձրացող աստիճանավորման ձևավորման հիմքում:

Այսպիսով աստիճանավորումն իրականանում է երեք կարգով ոսկիների քանակի ածմանը զուգընթաց աճում են մարդկային որակները , սրան էլ զուգահեռ բայերը, ինչի շնորհիվ էլ առավել ցայտուն է դառնում այս ամբողջ արարողության հեղինակին հոգևորականին ուղղված ծաղրը: «Մեծապատիվ խմբագիր» Օգսեն Խոճասարյանի ոչ հաստատուն ու փոփոխական կերպարի և նրա գրած անսկզբունք հողվածների երգիծանքն իրականացվում է դարձյալ աստիճանավորումների համատեղ գործածությամբ, այսպես՝ «Սնոթի ըլլար նե՛ ժողովրդական էր, պատառ մը հաց ուտելուն պես՝ միապետական կը դառնար, վրան սուրճ մը կը խմեր նե՛ ապակեդրոնացականությունը կը պաշտպաներ. Այվախյանին դեմ բարկանար նե՛ կեդրոնացումը կը պաշտպաներ. օր մը Հասունյան կըլլար, օր մը Հակահասունյան, օր մ'ալ երկուքը մեկեն կըլլար»(էջ 203):

Ոճական այս համատեքստում համատեղված բանադարձումները փոխկապակցված են և փոխպայանավորում են ինչպես մեկը մյուսի, այնպես էլ անբողջական բաղադրյալ բանադարձման ստեղծումը: Ձևավորված բաղադրյալ աստիճանավորումն արտահայտված է երկաստիճան ածմամբ ձևավորված ու

փոխկապակցված աստիճանավորումների և սրանցով փոխպայմանավորված երրորդ աստիճանավորում-բաղադրիչի համատեղմամբ: Բանադարձումային բաղադրյալ այս կառույցով էլ ավելի ցցուն է դառնում սեփական «ես» չունեցող ազգային ջոջի ծաղրը: Սյապիսով՝ ոճական համատեքստը կարելի է արտահայտել «բանադարձում+բանադարձում+բանադարձում» եռաբաղադրիչ կառույցով, որի բաղադրիչի գործառույթով հանդես է գալիս բարձրացող աստիճանավորումը:

Ամփոփելով սույն լեզվանյութի քննությունը հանգում ենք հետևյալ եզրակացություններին. 1. Ոճական միևնույն համատեքստում համատեղ կիրառվում են բառային բանադարձումները ձևավորելով միատարր «բանադարձում+բանադարձում» կառույց: 2. Համատեղված բանադարձումների քանակային տարբերությամբ պայմանավորված ոճական համատեքստը կարող է արտայատվել երկբաղադրիչ և եռաբաղադրիչ միատարր կառույցների ձևով: 3. Երկբաղադրիչ և եռաբաղադրիչ բանադարձումային միատարր կառույցների ձևավորման բաղադրիչի գործառույթով հանդես է գալիս աստիճանավորումը: 4. Քննության առնված գրական ստեղծագործության մեջ «բանադարձում+բանադարձում» ոճական կառույցը գործածության հաճախականությամբ զիջում է վերը հիշատակված ոճական կառույցներին, որն էլ պայմանավորված է քննվող ստեղծագործության ժանրային առանձնահատկությամբ, բանադարձումների քիչ գործածությամբ և դարձույթների համեմատ բանադարձումների համատեղելիության հատկության թույլ արտահայտվածությամբ: Դարձույթներն ավելի ունակ են համադրվելու, ընդ որում՝ ոչ միայն դարձույթների, այլև բանադարձումների հետ: 5. Ինչպես արդեն իսկ քննված ոճական կառույցներում, այնպես էլ քննվող «բանադարձում+բանադարձում» կառույցում ոճական հնարանք-բաղադրիչները փոխկապակցված են և փոխպայմանավորում են մեկը մյուսի (մյուսների) առաջացումը նպաստելով ոճական այս կամ այն պատկերի ստեղծմանը:

Combination of word observations in Hakob Paronyan's "National Big Men"

In Hakob Paronyan's work "National Big Men" in the same stylistic context word observations creating multi component observation stylistic structure there are used, which is expressed by "observation + observation + observation" general model. Homogeneous observation stylistic structure may create joint used similar observations. In the same stylistic context joint observations are conditioned by the quantitative difference, i.e. that kind of stylistic structure may be both double component and triple component expressed accordingly «observation + observation» and «observation + observation + observation» models. Observation double component and triple component with component-observation function figures climax as homogeneous stylistic structures factor. "Observation+ observation" stylistic structure conditioned by stylistic devices yields the already observed other stylistic structures.